# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

2018 թվականի մայիսի 17-ին կայացավ <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցության Գյումրիի քաղխորհրդի և Գյումրու ավագանու <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցության համատեղ նիստը: Նիստին մասնակցում էին ԱԺ պատգամավոր Վարդևան Գրիգորյանը, ավագանու <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցության անդամներ՝ Արմեն Բաղեյանը, Սուսաննա Աստոյանը, Անդրանիկ Խաչատրյանը, Ռոման Սարգսյանը, Արմենուհի Մխիթարյանը, Արմեն Աղանյանը:

Օրակարգում.

1. Գյումրու ավագանու <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցության անդամ Գրիգոր Մաթևոսյանին <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցությունից և <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցությունից հեռացնելու հարցը.

(ինֆ. Վ. Գրիգորյան)

2. Գյումրու ավագանու <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցության անդամ՝ Արտյոմ Ղարաղազարյանին խմբակցությունից հեռացնելու հարցը.

(ինֆ. Վ. Գրիգորյան)

Նշեց, որ Գրիգոր Մաթևոսյանը, լինելով <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցության անդամ և Գյումրու ավագանու <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցության անդամ, ինքնակամ, խմբակցությունից անկախ որոշում է կայացրել միանալու <<Բալասանյան>> խմբակցությունից ավագանու 10 անդամների հետ՝ անվստահություն հայտնելու Գյումրու քաղաքապետ՝ Սամվել Բալասանյանին և Գյումրու քաղաքապետ առաջադրել <<Բալասանյան>> խմբակցությունից՝ Տիգրան Հովհաննիսյանին:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ նշեց, որ Արտյոմ Ղարաղազարյանը Գյումրու ավագանու <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցության անդամ է, նույնպես ինքնուրույն որոշումներ է կայացնում և իրեն որոշումները համաձայնեցնում <<Բալասանյան>> խմբակցության անդամների հետ:

Մեր բոլոր հորդորները, որ խմբակցությունը չի մասնակցելու Գյումրու քաղաքապետարանի կազմակերպած <<կրկեսին>>, իրենք անտեսեցին, չենթարկվեցին խմբակցության կայացրած որոշմանը, այդ իսկ պատճառով առաջարկեց Գրիգոր Մաթևոսյանին հեռացնել <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցությունից և ավազանու <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցությունից, Արտյոմ Ղարաղազարյանին հեռացնել <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցությունից:

Արտահայտվեցին. Ա. Բաղեյանը, Ս. Աստոյանը, Ա. Մխիթարյանը, Ռ.Սարգսյանը, Ա. Խաչատրյանը, Ա.Աղանյանը:

Դատապարտեցին կատարվածը, անհասկանալի ու վրդովեցուցիչ համարեցին Գրիգոր Մաթևոսյանի և Արտյոմ Ղարաղազարյանի պահվածքը, նրանց վարքագիծը համարեցին կուսակցության և խմբակցության անդամին ոչ վայել, ուստի առաջարկեցին Գրիգոր Մաթևոսյանին հեռացնել <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցությունից և ավազանու <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցությունից, Արտյոմ Ղարաղազարյանին հեռացնել <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցությունից:

Որոշեցին.

1. Գրիգոր Մաթևոսյանին հեռացնել <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցությունից և ավազանու <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցությունից:
2. Արտյոմ Ղարաղազարյանին հեռացնել <<Բարգավաճ Հայաստան>> խմբակցությունից:

Որոշումն ընդունվեց.

Կողմ 100%, դեմ 0%, ձեռնպահ 0%

Նիստի նախագահ՝ /Վ. Գրիգորյան/

քարտուղար՝ /Ս. Աստոյան/

Արձանագրություն

2018 թվականի մայիսի 17-ին ժամը 12⁴⁰ –ին տեղի ունեցավ Գյումրու ավագանու «Հայկական վերածնունդ » խմբակցության նիստը՝ մասնակցությամբ խմբակցության անդամներ Ս. Մարտիրոսյանի, Հ. Եղիազարյանի և Ավ. Առաքելյանի : Բացակայում էր խմբակցության անդամ Հենրիկ Պողոսյանը:

Օրակարգում .

«Հայկական վերածնունդ խմբակցության անդամ Հենրիկ Պողոսյանին անվստահություն հայտնելու և խմբակցության կազմից հեռացնելու մասին» հարցի քննարկում:

(ինֆ. խմբ. ղեկ. Ս. Մարտիրոսյան)

Լսեցին.- Խմբակցության ղեկավար Ս. Մարտիրոսյանի հաղորդումը խմբակցության անդամ Հենրիկ Պողոսյանին՝ խմբակցության որոշումները պարբերաբար չկատարելու , խմբակցության կանոնադրական պահանջներին չենթարկվելու մասին:

Արտահայտվեցին.- Ավ. Առքելյանը, Հ. Եղիազարյանը:

Որոշեցին.- «Հայկական վերածնունդ» խմբակցության կանոնադրության 6.6 կետի, գ ) ենթակետի համաձայն և խմբակցության անդամների բաց քվեարկության միաձայն արդյունքով (3 կողմ, 0 դեմ) Հենրիկ Պողոսյանին հեռացնել խմբակցությունից:

Խմբակցության ղեկավար՝ Ս. Մարտիրոսյան

Խմբակցության քարտուղար՝ Հ. Եղիազարյան

Խմբակցության անդամ՝ Ավ. Առաքելյան